ոմանք յԱլամաննեայց կայսրանային, և ոմանք յԻտալիոյ, և ամօթ բերէին Հռոմայ:

Գրնկարիոս առաջին սկսաւ յամի Տեառն Ջ.Ր. ինքնակալեալ ամս Գ: Սա կիրթ և վարժ և հմուտ պատերազմաց գոլով պատերազմեցաւ ընդ Հռոմայեցիս բազում զօրութեամբ:

Գուալտուս առաջին Ալաման սկսաւ յամի Տեառն Ջ.Ժ.Ա. եղև ինքնակալեալ ամս Ե: Բայց ընդ կայսերս ոչ թուի սա. զի ոչ իշխեաց յԻտալիայ: Յաւուրս սորա եղեն Տաճիկքն յԻտալիայ, և աւերեցին զամենայն աշխարհն՝ և դարձան:

Գրնկարիոս երկրորդ սկսաւ յամի Տեառն Ջ.Ժ.Ր. ինքնակալեալ ամս Ր: Սա իշխեաց ամենայն Իտալիոյ, սակայն ոչինչ յիշատակագրութիւն արարեալ՝ մեռանի:

Հուգոս առաջին սկսաւ յամի Տեառն Ջ.Ի.Օ. թագաւորեաց ամս Ժ.Գ: Սա ո՛չ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան